ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցն ենթակա է մերժման, գալիս է այն եզրահանգման, որ Դատարանի 08.12.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ վճռի վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո պետք է այն վերացնել:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ, 198-րդ, 360-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը՝

ՎՃՌԵՑ

1. <<Պրոֆի Գրուպ>> ՍՊ ընկերության հայցն ընդդեմ <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի՝ <<Պրոֆի Գրուպ>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի ռեկտոր Գոռ Վարդանայանի 21.08.2023 թվականի թիվ ՀԱՊՀ-2023/6 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 08.12.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո այն վերացնել:

4. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ